



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ

« 22 » օգոստոսի 2019թ.

№ 554-ձ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի ԹԻՎ 454-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների 1-ին մասերը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի հուլիսի 23-ի «Հարկային և մաքսային ծառայությունների մրցութային և ատեստավորման հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 454-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) Հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
  - 2) Հրամանի 2-րդ կետի «մրցույթների և ատեստավորման» բառերը փոխարինել «մրցույթների, ատեստավորման և վերապատրաստման» բառերով:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142



Դ. ԱՆԱՆՅԱՆ



**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ**

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔԱԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ  
ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Ռաֆիկ Մաշադյան	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Սրբուհի Ղազարյան	ՀՀ վարչապետի խորհրդական
Օրի Ալավերդյան	ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ
Շուշանիկ Ներսիսյան	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Արման Մնացականյան	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ
Թելման Ասատրյան	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության պետ
Լևոն Հովհաննիսյան	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներքին անվտանգության վարչության պետ
Կարինե Գրիգորյան	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ
Հրաչյա Մուրադյան	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման վարչության պետ

